

ԲՐԻԳԱԴԻՐԻ




ԳՐԱԴԱՐԱՆ



Մ. Ֆ. ՎԻԿԻՆՍԿԻՅԵ

ԻՆՉՊԵՍ ՑՈՒՅՑ ՏԵԼ ԸՆԸՄՆԻՆ  
ԸՌԸՋԻՆ ՈՔՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԸՄԱՆԸԿ



619  
4-56

031121-51

619  
4-56

Մ. Գ. ՎԻԴԻՆՍԿԻՑ

К. Г. В. Варгана  
Т. Р. М. М. Кефеханазе  
Ц. Н. Библика Т. Р.  
кни К. Г. У.

**ԻՆԶՊԵՍ ՑՈՒՅՑ ՏԱԼ  
ԱՆԱՍՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

Проворено  
1949 г.


Բարգմ. Վ. ԱՎԱԳՅԱՆ



031121-51

ԱԶՈՎ-ՍԵՎԵՌՈՎՅԱՆ ՅԵՐԿԻՐԱԹԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1935

12 AUG 2013



28738-60

13-141151

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր յերկիրն այժմ պայքարում է անասնապահության վորակական և քանակական արագ զարգացման համար, ձգտելով այն նպատակին, վոր դրել է կուսակցությունը, այն է՝ յերկրորդ հնգամյակում յերկու-յերեք անգամ ավելացնել անասնապահության մթերքների սպառումը: Այս նպատակին հնարավոր կլինի հասնել այն ժամանակ, յերբ բարձրացվի աշխատանքային կարգապահությունը ֆերմաներում, լայնորեն կիրառվի սոցմրցակցությունն ու հարվածայնությունը, ուժեղացվի զգաստությունը դասակարգային թշնամի տարրերի հանդեպ և պայքարը դատարկապորտության դեմ, յերբ ճիշտ և գիտական հիմքի վրա զբվին անասունների կերակրումը, խնամքը և պահպանումը:

Անասունների թիվն ավելացնելու գործում հսկայական նշանակություն ունի հղի անասունների խնամքը և, մանավանդ, ծնելու ժամանակ նրանց առանձին ոգնություն ցույց տալը: Անասնապահության բոլոր աշխատողները գիտեն, վոր ծնելու ժամանակ անասուններին հասարակ ոգնություն ցույց տալը հաճախ փրկում է կորստից արգանդապտուղը, իսկ ծնող անաս-

նին — ծնելուց հետո առաջացող այն ծանր հիվանդու-  
թյուններից, վորոնք հաճախ պատճառ են դառնում յեր-  
կարատե ամուլթյան: Յեվ ընդհակառակը, յեթե ծնելու  
ժամանակ անհրաժեշտ ոգնությունն ուղացվի կամ յեթե  
անշնորհք և վատ ոգնությունն ցույց տրվի (առանց  
ծննդաբերական ոգնության հիմնական կանոնները գի-  
տենալու), այդ դեպքում արգանդապտուղը կարող է  
վոչնչանալ, իսկ ծնող անասունը ծանրապես հիվանդա-  
նալ և նույնիսկ սատկել:

Ընկ. Ստալինը 17-րդ կուսհամագումարում ցուցմունք  
տվեց, վոր՝ «Անասնապահության գործը պե՛տք է իրենց  
ձեռքն առնեն վողջ կուսակցությունը, մեք բոլոր  
աշխատողները՝ կուսակցականները յեվ անկուսակ-  
ցականները...»:

Մեր սիրելի առաջնորդի այս ցուցմունքն ամենից  
առաջ հատուկ պատասխանատվություն է դնում անաս-  
նապահության անխտիր բոլոր աշխատողների վրա, վո-  
րոնք բոլշևիկորեն պետք է պայքարեն անասունների  
թիվը և մթերատվությունն ավելացնելու համար, հա-  
մառորեն ձգտելով տիրապետել իրենց արտադրության  
տեխնիկային:


Այս գրքի նպատակն է՝ առաջնորդի հրահանգը կա-  
տարելու համար, ծանոթացնել գոմի, խոտոի և խոզա-  
նոցի աշխատողներին, թե ինչպես պետք է ճիշտ կազ-  
մակերպել անասունների ծննդաբերությունը և առան-  
ձին ոգնությունն ցույց տալ նրանց, հիմնվելով ման-  
կաբարձական գիտության և փորձի վրա:

## ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԱՏՈՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Թե ինչպես են կազմված և դասավորված անասուն-  
ների սեռական որգանները — պետք է գիտենա յուրա-  
քանչյուր վոք, ով վոր խնամում է հղի անասուններին  
և ծնելու ժամանակ նրանց անհրաժեշտ ոգնությունն է  
ցույց տալիս: Սեռական որգաններում արգանդապտուղը  
զարգանում և աճում է հղիության ժամանակ, իսկ ծնե-  
լիս՝ նա առաջ է շարժվում ծննդյան անցքերի միջով  
և դուրս գալիս կամ ազատորեն առանց դժվարու-  
թյան և կամ, ընդհակառակը, դժվարությամբ, ոգնու-  
թյան կարիք առաջ բերելով: Ծանր կամ թեթև ծննդա-  
բերությունը հաճախ կախում ունի նրանից, թե արգան-  
դապտուղը ուղիղ է տեղավորված անցքում, թե անկա-  
նոն. իսկ այդ հասկանալու համար պետք է գիտենալ  
եղ անասունների սեռական որգանների կազմությունը,  
այլապես ծնելու ժամանակ ոգնելու փոխարեն կարելի  
յե մեծ վնաս հասցնել թե՛ մորը և թե՛ ձագերն:

Եզ անասունների զլխավոր սեռական որգաններն  
են — 1) ցախարզանդ, 2) արզանդ և 3) ձվարաններ:  
Այս որգանները դասավորված են այսպես. դրսի կողմը  
գտնվում է սեռական ճեղքը, վորը շրջապատված է  
փափուկ մազերով, այսպես կոչված արտաքին շրթունք-

ներով (սեռական հանգույց): Սեռական ձեղքի ներս տանող շարունակութունը նախարգանդն է, վորի ստորին պատին գտնվում է միզանցքի ծակը, վորը նախարգանդի արտաքին ծայրից հեռու յե 10—14 սմ մատակ ձիերի մոտ և 8—10 սմ կովերի մոտ: Մատակ ձիերի և կովերի նախարգանդներն ունեն մինչև 30—40 սմ յերկարութուն:




Նկ. 1. Կովի սեռական օրգանները, a — Արգանդայեղջուր, b — Չվարաններ, c — Արգանդավիզ, g — Նախարգանդ:

նման են մսազնդերի, վորոնք իրենց մեծությամբ և ձևով հիշեցնում են լոբին:


Չվարանները կապակցվում են արգանդայեղջուրների հետ փոքր վարդապտույտ խողովակների միջոցով, վորոնք կոչվում են ձվամուղներ: Տարբեր տեսակի

նախարգանդի հետևում գտնեղված է արգանդաբուկը, վորի միջով անցնող խողովակը տանում է զեպի բուն արգանդը: Այդ խողովակը չափազանց նեղ է և լայնանում է միայն ծննդաբերության ժամանակ: Արգանդարկան տակ գտնվում է միզափամփուռը:

Անասունների արգանդը բաղկացած է յերկու աջ և ձախ տատանվող յեղջերանման մասերից, վորոնց հենց այդ պատճառով յեղջուրներ են անվանում: Արգանդայեղջուրների մոտ գտնվում են ձվարաններ: Նրանք




Նկ. 3. Խոզի սեռական օրգանները. 1 — Արգանդայեղջուր, 2 — Չվարաններ, 3 — Նախարգանդ, 4 — Միզափամփուռ, 5 — Նախարգանդ, 6 — Միզանցքի ծակ:



Նկ. 2. Չվարան, սեռական օրգանները. 1 — Արգանդայեղջուր, 2 — Չվարաններ, 3 — Արգանդավիզ, 4 — Միզափամփուռ, 5 — Նախարգանդ, 6 — Միզանցքի ծակ:

անասունների սեռական որգանների կազմվածքը ցույց է տրված 1, 2 և 3 նկարներում:

Անասունների սեռական որգանները գտնվում են փորի և կոնքի խոռոչներում: Կոնքի խոռոչ կոչվում է մարմնի ներսի խոռոչի այն մասը, վորը սահմանավորվելով կմախքի վոսկորներով պոչի մոտ, թասի ձև է ընդունում: Կոնքը բաղկացած է յերկու մասերից, վո-



Նկ. 4. Կովերի սեռական որգանների դասավորությունը մարմնի խոռոչում. 1—Ուղիղ աղբը. 2—Նախարգանդ. 3—Արգանդավիզ. 4—Արգանդայեղջուր. 5—Միզափամփուռ. 6. Կոնքուկ:

րոնցից յուրաքանչյուրը կազմվում է յերեք միմյանց կպած վոսկորից: Կոնքի վերևը տեղավորված է գավա-կոսկրը: Այսպիսով ստացվում է կոնքի խոռոչ, վորը փակված է վոսկորներով և հողակապերով: Ծննդաբե-րության ժամանակ արգանդապատուղը շարժվում է կոնքի առանցքի ուղղությամբ:

Մատակ ձիերի կոնքի առանցքը ուղիղ գծի նման է, իսկ կովերինը — բեկբեկված գծի ձև ունի: Ահա թե ինչու ծննդաբերության ժամանակ կովերն ավելի հա-ճախակի ոգնություն կարիք են զգում, քան մասուկ ձիերը: Կունի մեծությունը յեվ կառուցվածքը մեծ

նեանկություն ունի ծննդաբերության ժամանակ: Նեղ կոնք ունեցող անասունները սովորաբար դժվա-րությամբ են ծնում և լինում են դեպքեր, յերբ կոնքի նեղության պատճառով անասունը բոլորովին չի կարո-ղանում ծնել:

Մտողաշ անասունների վողջ արգանդը գտնվում է կոնքի խոռոչում, այն ինչ շատ ծնած պառավ անա-սունների արգանդի մեծ մասը գտնվում է փորի խո-ռոչում, իսկ կոնքի խոռոչում տեղավորվում են միայն նախարգանդը, արգանդաբուկը և արգանդայեղջուր-ների մի փոքր մասը (տես նկար 4):

Չազի ծանրության ազգեցության տակ արգանդը հղիության ժամանակ իջնում է դեպի փորի խոռոչը: Խոշոր անասնի արգանդի բոլոր մասերը (բուկը, յեղ-ջուրները) սովորաբար հեշտությամբ են շոշափվում ուղիղ աղիքի միջով: Սեռական որգանների դասավոր-ությունները ցույց է տրված 4-րդ նկարում:


## ԱՐԳԱՆԴԱՊՏՂԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Չուզավորությունից հետո արույի սերմը (սերմնա-բջիջը) արգանդաբկի անցքով մտնում է արգանդայեղ-ջուրները, դեպի ձվամուղերը: Այդ ժամանակ ձվա-մղում լինում է եզի ձուն, վորը դուրս է յեկել ձվա-րանից: Եզի ձուն շատ փոքր է և աչքով չի տեսնվում, ինչպես և արույի սերմը: Սերմը և ձուն միանում են և տեղի յե ունենում բեղմնավորություն:

Բեղմնավորված ձուն ամրանում է արգանդի պա-տին և սկսում է աճել: Խոշոր անասունների մեջ (ձին, կով) մեծ մասամբ զարգանում է միայն մի պտուղ, իսկ մանր անասունների մեջ (վոչխար, խոզ) զարգա-նում են միանգամից մի քանի պտուղ, մանավանդ խո-

դերի մեջ, վորոնք ունեն յերկար վոլորապտուլտ արգանդայեղջյուրներ:

Լիովին զարգացած արգանդապտուղը տեղավորվում է արգանդայեղջյուրում: Այս արգանդապտուղը շրջապատված է լինում թաղանթներով, վորոնք մեծ նշանակութուն ունեն նրա զարգացման համար Արգանդապտուղի թաղանթները յերեք հատ են: Նրանք բոլորն



Նկ. 5. Կովի արգանդապտուղի թաղանթները: 1, 2 և 3 թվանշանները ցույց են տալիս արգանդապտուղի թաղանթների դասավորութունը: 4 թվանշանը — մաթմբեր, վորոնց միջոցով արգանդապտուղի թաղանթը միանում է արգանդի պատին:

եւ լցված են մի հեղուկով, վորի մեջ արգանդապտուղն ազատ շարժվում է և նրա շնորհիվ պաշտպանվում է հարվածներից (հեղուկը մեղմացնում է ցնցումները և դիմադրում է մյուս որգանների, որինակ, ստամոքսի ճնշմանը):

Արգանդապտուղի թաղանթների միջոցով կապ է հաստատվում արգանդապտուղի և արգանդի միջև, վորով և

անվում է արգանդապտուղը: Պորտապարանն արգանդապտուղից գնում է դեպի արգանդի պատը՝ արտաքին թաղանթի վրայից: Մննդարար նյութերը մորից արգանդապտուղին են անցնում արտաքին թաղանթի արյունատար անոթների և պորտապարանի միջոցով: Սրա շնորհիվ արգանդապտուղն արյան հետ միասին մորից ստանում է պատրաստի սնունդ: Արգանդապտուղի թաղանթները շատ մեծ նշանակութուն ունեն նաև ծննդաբերության ժամանակ: Արգանդապտուղի թաղանթների դասավորութունը ցույց է տրված 5-րդ նկարում:

Հիության տեղութունը (արգանդապտուղի զարգացումը) տարբերվում է զանազան անասունների մոտ և միջին հաշվով հավասարվում է՝


Չիունը . . . . .	11 ամիս
Կովինը . . . . .	9 »
Վոչխարինը . . . . .	5 »
Խոզինը . . . . .	4 »

Թե յերբ է վերջանում հիությունը և յերբ է մոտենում ծննդաբերությունը՝ կարելի չէ հասկանալ մի քանի նշաններով: Որինակ, կովի կուրծն ուռճանում է, պտուկները պնդանում են և խողովակաձև դառնում, սեռական հանգույցն ուռչում, կարմրում և փափկանում է. պոչի կողքերին խոր փոսեր են գոյանում (նկար 6): Նախարգանդից սկսում է լորձուկը դուրս գալ:

Մատակ ձիու կուրծք խիստ ուռճանում է, պտուկի ծայրին յերևում են կաթի մածուցիկ և չորացող կաթիլներ: Խոզերի կուրծք նույնպես խիստ ուռճանում է և սկսում է կաթ յերևալ:

Ծննդաբերությունը մոտենալիս մանր անասուններն անհանդիստ են լինում, նրանք աշխատում են առանձնանալ, իրենց համար վորջ են շինում:

Ծննդաբերութիւնն սկսվում է յերկուճի ցավե-  
րով, այսինքն արգանդի և վորովայնի պատերի մկան-  
ների կծկումով: Սկսբում յերկունքի ցավերը կարճատև  
են լինում, իսկ հետո ավելի ու ավելի յերկարատև են  
դառնում: Յաջն սկսելու ժամանակ արգանդաբուկը



Նկ. 6. Կովի մոտալուստ ծննդաբերութիւնի նշանները:

բացվում է: Այդ ժամանակ արգանդապտղի թաղանթ-  
ները, արգանդի կծկվելու ազդեցութեամբ, սեպի նման  
մտնում են արգանդաբերական խողովակը և լայնացնում  
այդ խողովակը: Այդ ժամանակ նախարգանդից դուրս  
է գալիս մեծ քանակութեամբ լարժուն լորձուկ: Անտ-

տունն անհանգստանում է, պոչը պտտեցնում է և հա-  
ճախ արտաթորում և միզում է:

Յեթե արգանդապտղի թաղանթները (փամփուշտ-  
ները) շատ վաղ պատուվեն, ապա արգանդաբուկը դժ-  
վարութեամբ է լայնանում, ծննդաբերութիւնը դժվար-  
անում է և այդ դեպքում շուտափուլյա ոգնութիւն  
է պետք: Յերը ծննդաբերական անցքերը բավականա-  
չափ լայնացված են, այն դեպքում արգանդապտղի  
փամփուշտները պայթում են և նրանցից հոսում է լոր-  
ձուկաքային հեղուկ, վորը ծածկում է արգանդապտղի  
շարժման ճանապարհը և նրան լարժուն է դարձնում,  
դրանով իսկ հեշտացնելով ծննդաբերութիւնը:

Չի կարելի ժամանակից շուտ պատուել արգան-  
դապտղի փամփուշտները, վորովհետև դա դժվարացնում  
է ծննդաբերական անցքերի լայնացումը և առաջաց-  
նում է նրանց չորութիւնը, վորպիսին արգելք է հան-  
դիսանում արգանդապտղի շարժմանը (չոր ծննդաբե-  
րութիւն):

Ծննդաբերութիւնի տևողութիւնը տարբեր է լինում.  
որինակ, ձիերի ծննդաբերութիւնը տևում է 15-ից  
մինչև 30 րոպե, կովերինն ու վոչխարներինը — 2-ից  
մինչև 6 ժամ, խոզերինը — 2-ից մինչև 6 — 7 ժամ,  
ըստ վորում գոճիների ծննդյան միջև յեղած ժամա-  
նակի տևողութիւնները հավասար են 20 — 30 րոպեյի:  
Յերկվորյակներ լինելու դեպքում, խոշոր անասունների  
յերկրորդ արգանդապտուղը սովորաբար դուրս է գա-  
լիս առաջինից մեկ կամ յերկու ժամ հետո:

Չի ու և խոզի արգանդապտղի թաղանթները (ձագ-  
ընկերը) դուրս են գալիս կամ արգանդապտղի հետ  
միասին, կամ 15 — 20 րոպե անց, մինչդեռ յեղջու-  
րավոր անասնի ձագընկերն ուշանում է մինչև 3 — 6  
ժամ, իսկ յերբեմն ել ավելի:



ՈԳՆՈՒՅՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԾՆՆԴԱԲԵՐՈՒՅՅԱՆ  
ՔԱՄԱՆԱՎ

Վորպեսզի ծննդաբերությունը լավ անցնի, դրա համար հարկավոր է նախ յեվ առաջ՝ լավ պահպանվել յեվ յերկուրդ՝ կարողանալ ոգնել դժվար յեվ անկանոն ծննդաբերության դեպքում:

Ծննդաբերության պատրաստվելը մեծ նշանակություն ունի: Ուշադիր նախապատրաստությունը ապահովում է ծնող անասունների համար այնպիսի պայմաններ, վորոնք նպաստավոր են թե ծննդաբերության և թե մոր ու նորածին ձագի առողջությունը պահպանելուն պատահով մի շարք միջոցառումներ անցկացնելու համար: Կոլխոզներում և սովխոզներում անասուններին ննդաբերության նախապատրաստելը կազմակերպւած պետք է անցկացնել: Ամենից առաջ, ծննդաբերության համար հարկավոր է ունենալ հատուկ տեղ՝ առանձնացրած ծննդարան: Ծննդաբերությունը պետք է տեղի ունենա ընդարձակ և մաքուր մարտեղում, վորը գտնվելու յե լուսավոր, չոր և մաքուր շենքում: Ողբ մաքրելու համար պետք է շենքում ողբափոխիչ լինի շինված, իսկ մեղր և աղբահեղուկը դուրս տանելու համար — միզատար անցքեր: Ծննդարանի հատակը խորթուբորդություններ չպետք է ունենա և շատ թեք չպետք է լինի: Չպետք է յերբեք մոռանալ վոր կեղտոտ և ողն ապականված շենքերում ծնող անասունները հաճախ հեռծննդաբերական հիվանդություններ են ունենում: Հիվանդանում են նույնպես և նորածին ձագերը:

Հենց վոր ծնելու ժամը մոտենում, է պատրաստում են այն տեղը, ուր պետք է կատարվի ծննդաբերությունը: Ծննդաբերության հատկացված մարտեղը

մաքրում և լվանում են հականեխիչ լուծույթով (լիզոլի և կրեոլինի 3 տոկոսանոց լուծույթ): Փռում են բավական քանակութամբ չոր և մաքուր հարդ: Սակայն յերբ խոզերն են ծնում, չպետք է շատ հարդ փռել մարտեղում, վորովհետև գոճիները կարող են ծածկվել հարդի տակ և մայրերը չնկատելով նրանց, կարող են ճխլտել նրանց իրենց ծանրութամբ: Ծննդաբերության ժամանակ չի կարելի փովածքի համար գործածել մանր, տրորված հարդ և մանավանդ մղեղ: Նախ քան հղի անասնին ծննդաբերական մարտեղում տեղավորելը, նրան խնամքով մաքրում են, իսկ հետույքը լվանում վորևե հականեխիչ լուծույթով:

Յերբ անասունը արդեն պատրաստված է ծննդաբերության համար և փոխադրված է ծննդաբերության մարտեղը, նրան հանգիստ են թողնում՝ հատկապես ջոկված, պատրաստականություն ունեցող և փորձառու աշխատողի հսկողության ներքո: Վերջինս միշտ պետք է պատրաստ լինի անասնին ոգնություն ցույց տալու, յերբ նա դժվարութամբ է ծնում: Անասուններին ծննդաբերության ժամանակ ոգնելու համար անհրաժեշտ են հետևյալ իրերը. — մաքուր խալաթ, մանկաբարձական պարան, հոգնայի (կլիզմա) գալաթը, հականեխիչ նյութերի լուծույթներ և վազելին: Ոգնության գործին ձեռնարկելիս, պետք է ոգնողը կարի իր մատների յեղունգները, սապոնով լվանա և հականեխիչ լուծույթով վորողի ձեռքերը և հագնի մաքուր խալաթ:

ԿԱՆՈՆԱՎՈՐ ԾՆՆԴԱԲԵՐՈՒՅՅՈՒՆ

Յեթե ծննդաբերությունը կանոնավոր է ընթանում, ապա սովորաբար վոչ մի ոգնություն չի պահանջվում և այս դեպքում միջամտությունն ոգուտի փոխարեն

կարող է միայն վնաս հասցնել: Ուսի պիսի կարողանալ գանազանել կանոնավոր ընթացող ծննդաբերություններն այն անկանոն յեվ դժվարին ծննդաբերություններից, վորոնք ոգնության կարիք են պահանջում:

Ծննդաբերությունը կանոնավոր լինելու դեպքում անասունն սկզբում անհանգստանում է, շուտ-շուտ վերկենում ու պառկում և ուժգին շարժում է պոչը: Ապա սկսվում են ցավերը, վորոնք սկզբում կարճատև են լինում, բայց հետո զնալով ավելի յերկարատև են դառնում: Նախարգանդից յերևում է արգանդապտղի փամփուշտը, վորն ինքնիրեն պատռվում է և նրանից շուր է հոսում: Այնուհետև նախարգանդից շուտով դուրս են գալիս արգանդապտղի վորտքերը, վորոնք սմբակների ներբաններով վերև կամ ներքև են ուղղված լինում: Առաջին դեպքում արգանդապտուղն առաջ է շարժվում առջևի վորտքերով, իսկ յերկրորդ դեպքում՝ հետևի վորտքերով: Մոր ցավերը զնալով ավելի սաստկանում են: Արգանդապտղի գլուխն անցնում է ծննդաբերական անցքերի միջով և հայտնվում է նախարգանդում: Հենց վոր վորտքերը և գլուխը յերևան, ծննդաբերությունը համարյա միշտ վերջանում է բարեհաջող և առանց վորևե ոգնություն:

Ցերբ արգանդապտուղն առաջ է շարժվում հետևի վորտքերով, այս դեպքում ևս դժվարություններ չեն պատահում:


Այսպիսով կանոնավոր ծննդաբերության դեպքում արգանդապտուղը կորող է դուրս գալ —

1. Առջեվի վորտքերով դեպի առաջ: Այս դրությունը արգանդապտուղն այնպես է պառկած լինում ծննդաբերական անցքերում, վոր նրա թիկունքն ուղղված է մոր թիկունքին, վորտքերը ձգված են դեպի առաջ և նրանց վրա հենվում է արգանդապտղի

գլուխը: Նախարգանդից յերևում են սմբակները, վորոնք ներբանով դեպի ներքև են ուղղված:

2. Հետեվի վորտքերով դեպի առաջ: Այս դեպքում էլ արգանդապտուղը պառկած է լինում յերկարությունը: Նրա թիկունքն ուղղված է վերև:

28738-60




Նկ. 7. Արգանդապտղի առջևի ուղի դեբքը:

Ծնելիս՝ արգանդապտղի ամենալավ դրությունն այն ժամանակ է լինում, յերբ նա դուրս է գալիս առջևի վորտքերով: Իսկ յերկրորդ դեպքում, յերբ արգանդապտուղը դուրս է գալիս հետևի կողմից, պորտապարանը կարող է ձկնվել և դրա հետևանքով արգանդապտուղը կարող է ծննդաբերությունը խանգարել: Աստեղի յե ունե-



նում այն պատճառով, վոր ձագը արգանդում յեղած ժամանակ մոր արյան հետ միասին իր սնունդն ու ողը շնչառութեան համար՝ ստանում է պորտապարանի միջոցով: Յերբ արգանդապտուղն առջևի կողմից է ծնվում, ապա, հենց վոր նրա գլուխը դուրս գա, պորտապարանի սեղմվելը վտանգավոր չի լինում, վորովհետև ձագը կարող է շնչել բերանով: Ուրիշ բան է, յեթե արգանդապտուղը հետևի կողմից է ծնվում: Այս



Նկ. 8. Արգանդապտղի հետևի ուղի դեբը:

գեպըում, թեև հետևի վտանները հաջողութեամբ են դուրս յեկել, բայց յեթե ծննդաբերութիւնն ուշանա և պորտապարանը ձմլվի, ապա արգանդապտուղը, վորի գլուխը դեռ ներսումն է, կարող է ողի պակասութիւնից մեռնել: Ուստի յերբ ծննդաբերութեան ժամանակ արգանդապտուղը դուրս է գալիս հետևի վտաններով, չպետք է թույլ տալ, վոր ծննդաբերութիւնը ուշանա և պետք է ոգնութիւն ցույց տալ:

## ԱՆԿԱՆՈՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՆԱՍՆԻՆ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԸ

ԱՐԳԱՆԴԱՊՏՂԻ ՓԱՄՓՇՏԻ ՎԱՂԱԺԱՄ ՊԱՏՈՎԵԼԸ

Հաճախ պատահում է, վոր արգանդապտղի փամփուռը ժամանակից առաջ է պատուվում, հազով յերևալով նախարգանդից և կամ դեռ բոլորովին դուրս չեկած այնտեղից: Այս դեպքում հեղուկը դուրս է հոսում և ծննդաբերական անցքերը չորանում են, խիստ դժվարացնելով արգանդապտղի շարժումը:

Այս դեպքում անհրաժեշտ է ծննդաբերական անցքերը ներարկել լարժուն հեղուկ: Այդ նպատակով ջրի մեջ յեփում են վշի սերմ, տուղտի կամ մատուտակի արմատ. 100 գրամ վշի սերմը կամ 200 գրամ արմատը լցնում են 3 — 4 լիտր յեռացող ջրի մեջ, փակում և գոլորշիով խաշում են: Իսկ յերբ հեղուկը սառի, նրան քամում են մաքուր մատլայով կամ կտավով և ներարկում են անասնի սեռական անցքերը: Հեղուկը ներարկելու համար հարմար է գործածել սովորական հոգնայի գավաթ՝ ռետինե խողովակով:

Հեղուկը ներարկում են 2-ից մինչև 3 լիտրի չափ: Լարժուն հեղուկի ներարկումից հետո ծննդաբերական անցքերը լարժուն են դառնում և արգանդապտուղը նրանց միջով ավելի արագ և հեշտութեամբ է անցնում:

Ներարկելիս խիստ մաքրութիւն պետք է պահպանել, վորպեսզի հեղուկի հետ միասին կեղտը չանցնի սեռական անցքերը:

ԱՐԳԱՆԴԱՊՏՂԻ ՓԱՄՓՇՏԻ ՊԱՏՈՎԱԾԻՔԻ ՈՒՇԱՑՈՒՄԸ

Արգանդապտղի փամփուռը մեծ մասամբ ինքն իրեն է պայթում, բայց լինում են դեպքեր, յերբ ան-

հրաժեշտ ե պայթեցնել փամփուշտը, այլապես ծննդաբերութեան ժամանակ դժվարութիւններ կարող են առաջանայ: Փամփուշտ պայթեցնելը սովորաբար հարկավոր ե լինում այն դեպքում, յերբ արգանդապտուղը սխալ դիրք ե ունենում: Այս պարագային մայրերը սաստիկ ցավեր են քաշում ե արգանդապտուղը համարյա չի մոտենում յելքին: Հետագոտութիւնը ցույց ե տալիս արգանդապտղի անկանոն դրութիւնը, վորպիսին անհրաժեշտ ե ուղղել: Դրա համար հարկավոր ե պայթեցնել արգանդապտղի փամփուշտը: Թե ինչպես վորոշել արգանդապտղի անկանոն դրութիւնը ե ողնել ծնող անասնին, այդ մասին կխոսենք ներքեում:

Բացի արգանդապտղի անկանոն դիրքի դեպքերից, պետք ե լինում պայթեցնել փամփուշտը նաև այն ժամանակ, յերբ նա արդեն դուրս ե յեկել նախարգանդից, նրա հետից գալիս ե արգանդապտուղը, բայց ծննդաբերական ցավերը չեն մեղմացել ե ծննդաբերութիւնն ուշանում ե: Այս դեպքում փամփուշտը ամուր թաղանթ ե ունենում ե ինքնիրեն չի կարող պայթել:

Կրկնում ենք, վոր ծննդաբերութեան ժամանակ հազվագուտ դեպքերում միայն պեժ ե լինում պայթեցնել փամփուշտը, յե՛վ այդ մեծ գուտութիւն ե պահանջում: Պետք ե հիշել, վոր փամփուշտի ժամանակից առաջ պայթեցնելը—նշանակում ե դժվարացնել ծննդաբերութիւնը:

ՇՆՆԳՍԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՈՒՆԻՔԻ ՅԱՎԻ ՄԵՂՍ ԼԻՆԵԼՈՒ ԳԵՊՐՈՒՄ

Յերբեմն մոր թուլութեան պատճառով, վորպիսին առաջ ե գալիս վատ սննդից, վատ խնամքից կամ ծե-

րութիւնից, ծննդաբերութիւնը տեղի յե ունենում մեղմ ցավով: Յավը վերին աստիճանի կարճատև ու թույլ ե լինում ե ծննդաբերութիւնը յերկար ժամանակ ե տևում: Յերկունքի ցավի մեղմ լինելու պատճառով արգանդապտուղը դանդաղորեն ե առաջ շարժվում ծննդաբերական անցքերով:

Յերկունքն ուժեղացնելու համար անասնին հատուկ դեղ են տալիս՝ արգանդային յեղջերաստունկ (СНОРЬИНА): Արգանդային յեղջերաստունկի դեղափոշին վերցնում են 20 — 25 գրամ կովերի համար, 15 — 20 գրամ ձիերի ե 5 — 10 գրամ խոզերի համար: Դեղափոշին խառնում են քիչ քանակութեամբ ջրում ե լցնում են անասնի բերանը: Պետք ե լցնել ամուր շիշով ե զգուշութեամբ, քիչ բարձրացնելով անասնի գլուխը, հակառակ դեպքում հեղուկը կարող ե լցվել շնչափողը ե առաջ բերել թոքերի հիվանդութիւն: Թե ինչպես պետք ե անասուններին դեղ տալ, այդ մասին պետք ե սովորել անասնաբուժից կամ բուժակից:

Բացի արգանդային յեղջերաստունկից, կարելի յե տալ սովորական ողի—կովին ե ձիուն 250-ական գրամ, իսկ վոչխարին ե խոզին մինչև 100 գրամ:

Յեթե արգանդային յեղջերաստունկի կամ ողու միջոցով չհաջողվի սաստկացնել ցավը, այդ դեպքում անհրաժեշտ ե իսկույն դիմել անասնաբուժի կամ բուժակի աջակցութեանը:

ԱՐԳԱՆԴԱՊՏՈՂԻ ԱՆԿԱՆՈՆ ԴԻՐՔԻ ՀԱՍԱՐԱԿ ԴԵՊՔԵՐԸ ՅԵՎ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅՑ ՏԱԼԸ

Մանկաբարձական կանոնները չիմանալու պատճառով, պատահում ե, վոր դժվար ծննդաբերութեան


ժամանակ, չնայած սաստիկ ցավերին, արգանդապտուղը դուրս չի գալիս և մարդիկ աշխատում են զոռով դուրս քաշել նրան: Այդ դեպքում հաշվի չեն առնում արգանդապտղի դիրքը և քաշում են նրան ամբողջ ուժով: Այս բանը հաճախ արգանդապտղին և մորը վնաս է բերում, վորովհետև հաճախ անասնաբուժական մասնագետին դիմում են միայն այն ժամանակ, յերբ բոլոր ջանքերը զուր են անցել և յերբ թե՛ մորը և թե՛ արգանդապտղին հասցված է արդեն անուղղելի վնաս:

Չնայած սաստիկ ցավերին, յերբ դժվար ծննդաբերությունը ձգձգվում է ու արգանդապտուղն առաջ չի շարժվում, չնայած վոր արդեն բավական ժամանակ է անցել, անհրաժեշտ է քննել արգանդապտղի դիրքը: Առանց այսպիսի նախահետազոտության չէ կարելի ոգնություն ցույց տալ անասնին: Չգիտենալով արգանդապտղի դիրքը՝ ոգնության փոխարեն հեշտությամբ կարելի յե միայն վնաս հասցնել:

Արգանդապտղի դրությունը հետազոտելուց առաջ, պետք է կտրել յեղունգները, լիզով կամ կրեոլինի 2 տոկոսանոց լուծույթով լվանալ և հակաինֆեկցիայի միջոցները մերկացրած թևերը և ապա քսել նրանց վազելին կամ կանաչ սապոն: Յեթե հետազոտելիս պարզվի, վոր ծննդաբերական անցքերը չոր են, ապա նրանց մեջ ներարկում են այն լպրծուն հեղուկը, վոր մենք ցույց տվինք վերևում՝ արգանդապտղի փամփշտի վազաժամ պայթումը նկարագրելիս: Դրանից հետո, վազելինով կամ սապոնով քսված ձեռքի ավել հարմար ծալելով զգուշությամբ մտցնում են նախարգանդի մեջ:

Ձեռքը պետք է մտցնել արգանդապտղի մարմնի և թաղանթի մեջտեղը: Նախարգանդում մտցված ձեռքով

շոշափում են արգանդապտղի դրությունը և վորոշում են, թե արդյոք կանոնավոր է գալիս արգանդապտուղը, թե՛ անկանոն: Յեթե արգանդապտուղը կանոնավոր է գալիս, նշանակում է արգանդապտուղը առաջի կողմով է շարժվում, ձեռքը շոշափում է առջևի վոտքերը (վորոնց սմբակի ներբանն ուղղված է ներքև) և նրանց



Նկ. 9. Առջևի վոտքերը ծալվելը արմնի և ուսի հոգնում:

վրա հենված է գլուխը, Իսկ յեթե արգանդապտուղը հետևի կողմով է առաջ շարժվում, այդ դեպքում շոշափում են հետևի վոտքերը և նրանց միջև գտնվող պոչը: Թե՛ առաջին և թե՛ վերջին դեպքում արգանդապտղի թիկունքն ուղղված է դեպե մոր թիկունքը:

Ծննդաբերությունն անկանոն լինելու դեպքում, արգանդապտղի շատ տարբեր դիրքերի կարելի յե հանդիպել:

Արգանդապտղի անկանոն դիրքի ամենահասարակ դեպքերը և այդ դիրքն ուղղելու միջոցները նկարագրված է ներքևում:

ԱՌՋԵՎԻ ՎՈՏՔԵՐԻ ԾԱԼՎԵԼԸ ԱՐՄՆԿԻ ՅԵՎ ՈՒՍԵՐԻ ՀՈՒՆԵՐՈՒՄ


Արգանդապտղի այս անկանոն դիրքն ամենից հաճախ պատահում է կովերի մեջ: Արգանդապտղի առջևի վտաքերը վոչ թե ձգված են, այլ ծալված արմնկի և ուսի հոդերում: Այս անկանոն դիրքը կարող է լուրջ կերպով դժվարացնել ծննդաբերությունը: Չեռքը նախարգանդը մտցնելով, կարելի չե շոշափել առջևի վտաքերի սմբակները և նրանց վրա հենված քթի ծայրը: Այս դեպքում արմնկի հոդը գտնվում է ուսահոդի հետևում (տես նկ. 9):

Յեթե միայն մի վտաքն է ծալված, ապա ուղիղ պառկած վտաքին կապում են պարանը, վորպեսզի արգանդապտղի դիրքն ուղղելիս, այս վտաքը հետ չգնա: Հանգույցը պատրաստում են ամուր և բարակ պարանից կամ ավելի լավ է, յերկուս ու կես մետր յերկարություն ունեցող լամպի պատրուկից:

Արգանդապտուղը յետ պետք է մղել այն ժամանակ, յերբ ցավը դադարում է: Անկանոն դասավորված վտաքի կապատեղի վրա զգուշությամբ անց են կացնում հանգույցը, վորի մի ծայրը տալիս են ողնականին: Ապա ծնկից բռնում են վտաքը և քաշում առաջ ու մի քիչ գեպի վեր: Այս ժամանակ ողնականը քաշելով հանգույցը, ուղղում է ծալված վտաքը:

Յեթե յերկու վտաքերն էլ ծալված են, ապա յերկրորդն ևս ուղղում են այնպես, ինչպես առաջինը: Այս գործողությունը կատարում են մոր յերկունքի ժամանակ:

10-րդ նկարում ցույց է տրված, թե ինչպես պետք է պատրաստել հանգույցը, ինչպես հագցնել ձեռքին, վորպեսզի կարելի լինի մտցնել ծննդաբերական անցքերը և ձգել վտաքին:



Նկ. 10. Մանկաբարձական հանգույցավոր պարան և հանգույցի դասավորումը ձեռքի մեջ:

Գործածելուց առաջ հանգույցը պետք է լվանալ յեռացած ջրով և հականեխիչ լուծույթով:


ԱՌՋԵՎԻ ՎՈՏՔԵՐԻ ԾՆԿԱՆ ԾԱԼՎԵԼԸ

Առջևի վտաքերի ծնկերի ծալվելը հաճախ է պատահում: Դա առաջանում է արգանդավզի անբավարար լայնանալուց կամ արգանդապտղի փամփշտի վաղաժամ պայթելուց: Այս դեպքում արգանդապտղի դիրքը հետագոտեղիս, ձեռքը շոշափում է նրա ուղիղ տեղավորված գլուխը, բայց վորովհետև վտաքերը — կամ մեկը, կամ յերկուսն էլ — ներս են ծալված, այդ պատճառով հնարավոր չե հայտաբերել սմբակը: Չեռքը արգանդապտղի վզի տակ շոշափում է միայն ծունկը:

Այս դիրքը նախորդից ավելի դժվար է շտկվում: Այնպատանքը հեշտացնելու համար ծննդաբերական

անցքերի մեջ ներարկում են յերկու—յերեք լիտր լպլըր-  
ծուն հեղուկ: Շտկելու գործողութիւնը կատարում  
են մորը վտաքի կանգնեցնելուց հետո: Այս դեպքում  
մոր հետույքը առջևի մասից մի քիչ ավելի բարձր  
պետք է լինի:

Ծննդաբերական անցքերի մեջ մտցրած ձեռքով  
գտնում են ծալված վոտքի սմբակը և նրան այնպես




Նկ. 11. Առջևի վոտքերի ծալվելը ծնկան վրա:

են վերցնում ձեռքի մեջ, վոր շտկելիս նա չգիպչի  
ծննդաբերական անցքերի պատերին: Ապա արգանդա-  
պտուղը զգուշութեամբ հետ են մղում յերկունքի ընդ-  
միջումների ժամանակ: Այնուհետև աշխատում են  
ինչքան կարելի յե վոտքը ծալել արմնիկի հողի վրա,  
իսկ ծունկը հնարավորութեան չափ վեր են քաշում,  
դեպի արգանդապտղի բաշը (տես նկար 12): Հենց  
վոր սմբակը քաշվի արգանդապտղի վզի տակ, նրան

ձգում—յերկարացնում են և արգանդապտղին ու վոտ-  
քին տալիս են ուղիղ դիրք:


Այս աշխատանքը հեշտացնելու համար կարելի յե  
ոգտագործել մանկաբարձական հանգույց: Ծունկը  
ծալվելու դեպքում հանգույցը վոտքին անցկացնում  
են հետևյալ կերպով. հանգույցը ձեռքին այնպես են  
հագցնում, ինչպես ցույց է տրված 10-րդ նկարում, և



Նկ. 12. Վոտքերի շտկելը ծնկան վրա ծալած լինելու դեպքում:

այդ հանգույցը ձեռքով մտցնում են ծննդաբերական  
անցքերը: Յերը ծունկը բարձրացվի դեպի արգանդա-  
պտղի բաշը, այն ժամանակ հանգույցը գցում են վոտքի  
կապատեղի վրա և քաշում: Այն ժամանակ, յերը ոգ-  
նութիւնն ցույց տվողը ծունկերը դեպի բաշն է բարձ-  
րացնում, նրա ոգնականը զգուշութեամբ քաշում է  
հանգույցը և, յերկարացնելով վոտքը, տալիս է նրան

կանոնավոր դիրք: Յեթե չհաջողվի ուղղել վտարի անկանոն դիրքը, այն դեպքում պետք է անմիջապես կանչել անասնաբուժին կամ բուժակին:




Նկ. 13. Գլխի կողմակի դիրքը:

**ԳԼՆԻ ԱՆԿԱՆՈՆ՝ ԿՈՂՔԻ ԹԵՔՎԱԾ ԴԻՐՔԸ**


Արգանդապտղի գլխի անկանոն՝ կողքի թեքված դիրքը բավական հաճախ է պատահում: Գլխի այդ դիրքը լինում է փամփշտի վաղաժամ պայթելու, արգանդավզի անբավարար բացվելու և նմանապես ոգնուխյուն ցուլց տալու ժամանակ արգանդապտղի վտարն ուժեղ ու շտապ կերպով քաշելու պատճառով:

Այսպիսի դիրքում գանվող արգանդապտուղը հետագոտելիս, առջևի վտարքերը գաննում են ուղիղ դասավորված, իսկ գլուխը թեքված է լինում մի կողքի վրա և շուռ յեկած դեպի արգանդի խորքերը: Չեւքը շոշափում է միայն արգանդապտղի ծոված վիզը:



Նկ. 14. Կողքի ընկած գլխի ուղղումը:


Արգանդապտղի դիրքն ուղղելու համար արգանդի մեջ լցնում են լարժուն հեղուկ: Արգանդապտուղը ձեռքով հետ են մղում: Ներքևի ծնոտին աշխատում են հանգուլց անցկացնել, ձեռքով բարձրացնելով գլուխը դեպի վեր և գլխի թեքման հակառակ կողմը: Ոգնականը պարանով քիչ-քիչ քաշում է գլուխը, իսկ



Նկ. 15. Գլխի շքվելու կոճքի տակ:



ոգնութիւնն ցույց տվողը նրան ձեռքով նորմալ դիրք  
է տալիս: Յերբ ձիերն են ծնում, դժվարութեամբ է  
հաջողվում ուղղել այս դիրքը, վորովհետև ձիու ար-  
գանդապատղի վզի յերկարութեան պատճառով գլուխը  
շատ խորն է ընկած լինում: Յեթե սեփական ուժե-



Նկ. 16. Գլխի ծալվելը արգանդապատղի թեկունքի վրա:


րով չի հաջողվում ուղղել, ապա պետք է իսկույն  
դիմել անասնաբուժի կամ բուժակի ոգնութեան:

Բացի գլխի կողքի թեքված դիրքից, պատահում  
են նաև այնպիսի դիրքեր, յերբ գլուխը մանում է  
կրծքի տակ կամ ծալվում է արգանդապատղի կռնակի  
վրա: Նման անկանոն դիրքերը կարող է ուղղել միայն  
անասնաբուժը կամ բուժակը:

#### ԱՌՋԵՎԻ ՎՈՏՔԵՐԻ ԽԱՉՎԵԼԸ ԾՈՒԾՐԱԿԻ ՎՐԱՆ

Վոտքերի այս անկանոն դասավորութիւնը ամենից  
ավելի հաճախ պատահում է ձիերի մոտ: Այս դեպքում

առջևի վոտքերը պառկում են արգանդապատղի ծոժ-  
րակի վրա, ըստ վորում աջ վոտքը դեպի ձախ կողմն  
է թեքվում, իսկ ձախ վոտքը դեպի աջ կողմը: Այդ  
իսկ պատճառով, ձեռքով հետազոտելիս, վոտքերը  
գտնում են վոչ թե արգանդապատղի գլխի տակ, այլ




Նկ. 17. Առջևի վոտքերի խաչվելը ծոժրակի վրա:

վերևը գլխի վրա: Այս դիրքն ուղղելու համար հար-  
կավոր է զգուշութեամբ հետ մղել արգանդապատղը  
դեպի արգանդի խորքը, իսկ վոտքերին տալ կանոնա-  
վոր դիրք: Սա արվում է հերթով՝ նախ շտկում են մի  
վոտքը, հետո մյուսը:

#### ՀԵՏԵՎԻ ՎՈՏՔԵՐԻ ԾԱՆՎԵԼԸ

Յերբ արգանդապատղը ծնվում է հեռի վոտքերն  
առաջ պցած, հաճախ վոտքերից մեկը կամ յերկուսն  
եւ ծալված են լինում դեպի ներս, այնպես վոր սրմ-  
բակները գտնվում են փորի տակ: Հետազոտելիս ձեռքը

շոշափում է միայն հետևի վոտքերի արմունկները: Այս դիրքն ուղղելու համար անհրաժեշտ է նախ արգանդապտուղը հետ քշել դեպի արգանդի խորքը: Այնուհետև բռնում են արմունկը և հնարավորութայան չափ հրում են դեպի վերև և փոքր ինչ դեպի հետ: Իրանից հետո ձեռքով բռնում են սմբակը և ուղղում վոտքը՝ քաշելով դեպի առաջ և մի փոքր դեպի վերև:



Նկ. 18. Հետևի վոտքերի ծալվելը:


Բացի վերոհիշյալ դիրքից, պատահում է նաև, վոր հետևի վոտքերը բոլորովին ծալվում են վոտքի տակ:

Հետազոտելու ժամանակ կարելի չէ միայն շոշափել ձագի հետույքը և պոչը: Այս դիրքը շատ լուրջ և է հարկավոր է բժշկի կամ բուժակի ոգնությունը:

**ԱՐԳԱՆԴԱՊՏՎՈՒ ՈՒՐԻՇ ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐԲԵՐԸ**

Վերևում նկարագրեցինք արգանդապտղի անկանոն դիրքերի ամենահասարակ դեպքերը: Այս դիրքերի ուղղելն առանձին գիտությունն չի պահանջում: Պետք

է միայն իմանալ, թե ինչպես կարելի չէ վորոշել այդ անկանոնությունները և անասնին անհրաժեշտ ոգնությունն ցույց տալ: Բացի վերոհիշյալ անկանոն դիրքերից, գոյություն ունեն նաև արգանդապտղի մի շարք բարդ և աննորմալ դասավորություններ: Նրանցից ամենից ավելի հաճախ պատահում են հետևյալները.




Նկ. 19. Արգանդապտղի դիրքը՝ թիկունքով դեպի մոր փորը:


1. Արգանդապտուղն առաջ է շարժվում առջևի կամ հետևի կողմից, բայց նրա թիկունքն ուղղված է վոչ թե մոր թիկունքին, այլ փորին: Շոշափվում են վոտքերը, իսկ նրանց տակ — արգանդապտղի բերանն ու քիթը:

2. Արգանդապտուղը ծննդաբերական անցքերում տեղավորվում է վոչ թե մոր մարմնի յերկարությամբ, այլ լայնությամբ: Հետազոտելիս ձեռքը շոշափում է արգանդապտղի թիկունքը:

3. Արգանդապտուղն առաջ է շարժվում բոլոր չորս



Նկ. 20. Արգանդապտղի դասավորութիւնը ըստ լայնութեան:




Նկ. 21. Արգանդապտղի անկանոն, նստակայաց դիրքը:

վոտներով միասին: Այս դեպքում ձեռքը միաժամանակ շոշափում է չորս սմբակ:

4. Արգանդապտուղը շարժվում է առջևի վոտքերով, իսկ յետևի վոտքերն այնքան են ծալված դեպի առաջ, վոր արգանդապտուղը գտնվում է նստած դրութեան մեջ: Այս անկանոն դիրքը հաճախ պատահում է մատակ ձիերի մեջ: Արգանդապտղի այս բոլոր անկանոն դիրքերը պահանջում են անասնաբուժիկամ բուժակի շուսափույց ոգնութիւնը:

#### ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՎՈՐՅԱԿ ԾՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Յեթե ծննդաբերական անցքերում միաժամանակ յերկու արգանդապտուղ է գտնվում, անհրաժեշտ է ոգնութիւն ցույց տալ անամնին, վորովհետև յերկու արգանդապտուղները միանգամից դուրս գալ չեն կարող, իսկ ծննդաբերութեան ձգձգումը վատ հետևանքներ կարող է առաջացնել: Ոգնելիս, նախ ուշադրութեամբ հետազոտում են յերկ-



Նկ. 22. Յերկվորյակի ծնունդը:

վորյակի դիրքը, ապա առջևում գտնվող արգանդապտղի յերկու վոտքերին հանդույց են գցում: Այս դեպքում պետք է ուշադրութեամբ հետևել, վոր չլինի թե մի հանգույցն ընկնի մի արգանդապտղի վոտքին, իսկ մյուս հանգույցը — մյուսի վոտքին: Յերը հանգույցներն արդեն զցված են, խորքում գտնվող արգանդապտուղը հետ

են քշում, իսկ առջինը մոր յերկունքի ժամանակ դուրս են հանում ծննդաբերական անցքերից:

### ՎԻՓՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՋԱՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Յերբ անասունը ծնվում է ժամանակից շուտ և սովորաբար որապակաս, մեռած ձագ,— դա կոչվում է արորտ կամ վիժում: Անասունների մեջ վիժումների պատճառները բազմազան են և կարող են ունենալ թե՛ վարակիչ և թե՛ վոչ վարակիչ բնույթ: Վարակիչ վիժումներն առաջ են գալիս նրանից, վոր անասունների որգանիզմը թափանցում են վորոշ տեսակի միկրոբներ: (Միկրոբները շատ մանր կենդանի եակներ են, վորոնց կարելի չե տեսնել միայն միկրոսկոպի— խոշորացույցի ոգնությամբ):

Վարակիչ վիժումը ռաս վսանգավոր հիվանդությունն է: Յեթե անասուններին վարակումից գերծ պահելու միջոցներ ձեռք չառնվեն, ապա բավական է նախրում հայտնվի մի վարակիչ անասուն, վորպեսզի վարակը տարածվի բոլոր անասունների միջև և առաջացնի մասսայական վիժումներ: Խոզերի, վոչխարների և կովերի մոտ այս հիվանդությունը կոչվում է բրուցելեզ:

Բրուցելեզով հիվանդ անասուններից կարող են վարակվել նաև մարդիկ: Սակայն մարդը հեշտությամբ կարող է խուսափել վարակման վտանգից, յեթե հիվանդ անասուններին խնամելիս պահպանի նախազգուշացման կանոնները (ձեռքերը լվանալ հականեխիչ լուծույթով, հականեխել կոշիկները և հագնել արտագուստ):

Վիժման նշաններն են— սեռական հանգույցի վաղաժամ, անսպասելի ուռչումը, նախարգանդի խիստ

կարմրումը, սեռական ձեղքից թարախի հոսելը, կուրծի անհամաչափ և արագ ուռչելը: Այս նշանները յերևալուց հետո, անասունը զցում է (վիժեցնում է) մեռած արգանդապտուղ:

Վիժման նշանները յերևալուն պես, իսկույն պետք է հեռացնել անասնին ընդհանուր շենքից և մեկուսացնել: Անասնի կանգնած տեղը պետք է մաքրել և հականեխել, իսկ փովածքը թաղել անասնագերեզմանոցում, կամ ավելի լավ է այրել: Արգանդապտուղը և թաղանթները, դնելով նրանց անթափանձիկ ամանի մեջ, պետք է ուղարկել լաբորատորիան հետազոտելու:

Յեթե վորևե պատճառով չի կարելի արգանդապտուղն ու թաղանթներն ուղարկել լաբորատորիա, ապա նրանք ևս պետք է խորը թաղել կամ այրել: Վիժում առաջանալիս հարկավոր է իսկույն կանչել անասնաբուժին կամ բուժակին:

Վիժումների առաջացնողը հետևյալ պատճառներն են.

1. Հղի անասուններին հարվածելը կամ վերջ պատճառելը:
2. Փոսած, նեխած կամ սառած կեր տալը:
3. Սառցաշուր խմցնելը:
4. Հղիության յերկրորդ կեսին անասուններին մեծ քանակությամբ հյութալի կեր ուտեցնելը:
5. Քաղցածության պատճառով հղի անասունների հյուծվելը:
6. Հղի անասնի զանազան հիվանդությունները:

Վիժումը զժվարանում է այն ժամանակ, յերբ ծննդաբերական անցքերը շատ են չորացել, յերբ արգանդապտուղն անկանալի տեղափոխված և կամ աննորմալ կազմություն ունի: Այս դեպքերում վարա-

Մ. Ք. Ա. Պ. Котерханов  
Ц. Н. Бибака Т. Р.  
при К. Г. У.

կումից պաշտպանվելու համար պետք է մեծ զգուշությամբ հետազոտել արգանդապտղի դիրքը: Պետք է անպայման խալաթ հագնել, լվանալ և հականելսել ձեռքերը: Յեթե ձեռքի վրա վերքեր կամ ճանկավածքներ կան, պետք է նրանց յոդ քսել և կալլոզիում լցնել: Արգանդապտղի դիրքը հետազոտելուց և անասուններին ոգնություն ցույց տալուց հետո, ձեռքերը պետք է խնամքով լվանալ և նորից հականելսել, իսկ խալաթը ջրի մեջ յեռացնել այն գործիքների հետ միասին, վորոնք գործածվել են՝ արգանդապտուղը դուրս հանելու ժամանակ:

Պատահում է, վոր սատկած արգանդապտուղը շատ մեծ է լինում և կարծես թե նա ողով փքված է կամ ջրով լցված և ուսցրած: Այսպիսի դեպքերում իսկույն պետք է կանչել անասնաբուժին կամ բուժակին:

Վիժման հասարակ դեպքերում, յերբ մեռած արգանդապտուղը կանոնավոր դիրք ունի, ոգնություն կարող է ցույց տալ սրա համար նախապատրաստված ամեն մի անձնավորություն, յեթե նա անպայման պահպանի վերևում նկարագրած մանկաբարձական այդ կանոնները: Սակայն զժվար դեպքերում ոգնություն կարող է ցույց տալ միայն անասնաբուժը կամ բուժակը:

### ԱՐԳԱՆԴԱՊՏՐԼԻ ԱՅԼԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատահում է, վոր ծնում են այլանդակ արգանդապտուղներ: Այլանդակության շատ տեսակներ կան. կամ յերկվորյակներն են իրար կպած լինում կամ գլուխն է լինում անձոռնի, կամ վորքերն են լինում անշարժ-փետացած, կամ վիզն է լինում ծուռ և այլն:

Այլանդակությունների ժամանակ միայն անասնաբուժը կամ բուժակը կարող է դուրս հանել արգանդապտուղը, վորովհետև տվյալ դեպքում անասնին ոգնողը պետք է շատ բան գիտենա և փորձառություն ունենա:

### ՆԱԽԱԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ ՅԵՎ ՀԻՎԱՆԴ ԱՆԱՍՆԻՆ ՈԳՆԵԼԸ

ԾՆԵԼՈՒՅ ԱՌԱՋ ՈՒՌՁԵԼԸ


Յերբեմն անասունների, մանավանդ շատ կաթ տվող կովերի մոտ ծնելուց առաջ սաստիկ ուռեցք է յերևան գալիս (կուրծի ուռչումը): Ուռեցքը տարածվում է փորի վրա՝ կուրծի առջև և վորքերի վրա:

Նախածննդական շրջանում ուռչելը վտանգավոր է: Յերբ այդ շրջանում ուռեցք առաջանա, անհրաժեշտ է քչացնել անասնին տրվող խոտացրած կերի քանակը: Կրծի վրա քսում են վազելին կամ թարմ անալի յուղ և ձեռքով տրորում են: Յեթե կովերի կուրծը սաստիկ ուռած է, ապա տրորելուց բացի, անհրաժեշտ է նաև զգուշությամբ և քիչ-քիչ կթել կաթը: Վորքերի ուռչելու դեպքում պետք է մասն ածել անասնին և վորքերը յերիզով կապել:

ՆԱԽԱՐԳԱՆԴԻ ԳՈՒՐՍ ԸՆԿՆԵԼԸ

Այս հիվանդությունն ամենից հաճախ նկատվում է կովերի, վորջառնների և այծերի մոտ հղիության վերջին քառորդում: Դրանով ամենից ավելի շատ հիվանդանում են պառավ անասունները, մանավանդ վատ և անբավարար սնվելու դեպքում: Այս հիվանդության ժամանակ նախարգանդի պատերը դուրս են

գալիս սեռական հանգույցից գնդի նման, վորը յերե-  
խայի գլխի մեծությունն և ունենում: Նախարգանդի  
դուրս ընկնելն ավելի ուժեղանում և նամանավանդ այն  
ժամանակ, յերբ անասունը պառկում է:




Նկ. 23. Կովի նախարգանդի  
դուրս ընկնելը:

Դուրս ընկած նախարգանդն  
ուղղում են անասնի կանգ-  
նած ժամանակ: Այս դեպքում  
անասնի հետույքն առջևի մա-  
սից ավելի բարձր դիրքի վրա  
պետք է լինի: Վորպեսզի անա-  
սունը ույժ գործ չչնի, զրա հա-  
մար թիկունքի վրա պետք է  
դնել վորևե ծանրություն կամ  
ձեռքով հավաքել ու ծալել թի-  
կունքի ծայրի մասը: Նախար-  
գանդն ուղղելիս անասնի պոչն  
ու հետույքը պետք է լվանալ

հականեխիչ լուծույթով՝ շիբի (պաղլեղի) 2 տոկոսա-  
նոց լուծույթով և դրանից հետո ձեռքով տեղը գցել:

Նախարգանդը տեղը  
գցել կարելի յե աս-  
տիճանաբար, ձեռքի  
բուռնցքով, զգուշու-  
թյամբ սեղմելով դուրս  
ընկած մասի մեջտեղը  
հրելով այնդեպի առաջ  
և փոքր ինչ դեպի վեր:  
Հենց վոր նախար-  
գանդը նորմալ դիրք  
ընդունեց, ձեռքն զգուշությամբ հանում են, իսկ  
մյուս ձեռքով բռնում են նախարգանդը և թույլ չեն  
տալիս, վոր նա նորից դուրս գա:



Նկ. 24. Հանգույցով կապելը՝ նախար-  
գանդը դուրս ընկնելու դեպքում:

Ուղղելուց հետո, սեռական ձեղքի վրա հագցնում  
են ցանցանման հանգույց, վորպեսզի նախարգանդը  
նորից դուրս չընկնի: Հանգույցն ամրացնում են կո-  
վին բարակ պարանով, կապելով այն անասնի թի-  
կունքին և փորին (տես նկար 24): Նախարգանդն  
ուղղելուց հետո, անասնին տեղավորում են ախոռում,  
վորի հատակն այնքան թեք պետք է լինի, վոր հե-  
տույքն առջևի մասից բարձր լինի:

Յեթե ձեռք առած միջոցները չեն ոգնում, ապա  
հարկավոր է կանչել անասնաբուժին կամ բուժակին՝  
նախարգանդը կարելու համար:


ԾՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՊԱՌԿԵԼԸ

Այս հիվանդությամբ ամենից հաճախ անասուն-  
ները հիվանդանում են վաա կերակրվելու, հղիության  
ժամանակ շարժման մեջ չլինելու հետևանքով: Հի-  
վանդանում են մանավանդ պառավ անասունները: Այս  
հիվանդությունն ամենից շատ նկատվում է յեղջու-  
րավոր անասունների մոտ: Հիվանդ անասունը հաճախ  
պառկում է, շատ քիչ է կանգնում, իսկ յեթե կանգնի  
յել, ապա իսկույն նորից է պառկում: Այս դեպքում  
վորևե այլ հիվանդության նշաններ չեն նկատվում:  
Ծնելուց հետո այս հիվանդությունը շուտով անց-  
նում է:

Վորպեսզի այս հիվանդությունից բարդություններ  
չառաջանան և անասունը չսատկի, անհրաժեշտ է առան-  
ձին ուշադրությամբ խնամել անասնին: Իսկ վորպեսզի  
յերկար պառկելուց նրա մարմնի վրա վերք չառաջանա,  
զրա համար անասնի տակ մեծ քանակությամբ հարդ  
կամ ծղնոտ պետք է փռել: Կերը սննդարար և դյու-  
րամարս պետք է լինի (ջրախառն ալյուր կամ մղեղ,

լավ խոտ, ճակնդեղ): Հարկավոր ե անասնին հաճախ վոտքի կանգնեցնել և ման ածել, ինչպես նաև շուռ տալ մի կողքից մյուսի վրա, վորպեսզի մի կողքին յերկար պառկելուց վերքեր չառաջանան:

Յեթե հիվանդացած անասունը հնայած բոլոր ջանքերին հրաժարվում ե վոտքի կանգնել, ապա պետք ե



Նկ. 25. Կովի բարձրացումը, յերբ նա ծնելուց առաջ յերկար պառկած ե մնում:


բարձրացնել նրան պարանի ոգնությամբ: Պարանն այնպես պետք ե փաթաթել իրանի շուրջը, վոր նա անցնի կրծքի և նստատեղի վոսկրաթմբի տակից (տես նկար 25): Վոտքի բարձրացրած անասնին պետք ե կանգնած պահել, վոր նորից չպառկե և պետք ե ման ածել թեկուզ կարճ ժամանակով:

## ՇԵՏՄԵՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒՅՅՈՒՆՆԵՐ

ԱՐԳԱՆԴԻ ԴՈՒՐՍ ԸՆԿՆԵԼԸ

Յերբեմն ծննդաբերությունից հետո անասնի արգանդը դուրս ե ընկնում կլոր մսապարկի ձևով. հաճախ նրան կպած ե լինում ձագընկերը (արգանդապողի թաղանթը): Այն տպավորությունն ե ստացվում, կարծես թե դուրս ե յեկել անասնի փորոտիքը:

Ծնելուց հետո արգանդի դուրս ընկնելու պատճառը կարող ե լինել այն, վոր հղի անասուններին պահում են խիստ թեք հատակ ունեցող ախոռում:



Նկ. 26. Կովի արգանդի դուրս ընկնելը:

Արգանդի դուրս ընկնելը կարող ե պատահել նաև այն անասունների մոտ, վորանք ծնելուց առաջ տառապել են նախարգանդի դուրս ընկնելու հիվանդությամբ: Առանձնապես վտանգավոր ե ձիերի արգանդի դուրս ընկնելը, վորովհետև դրա հետևանքով նրանք հաճախ սատկում են:

Արգանդը շտկելու համար անհրաժեշտ ե անմիջապես կանչել անասնաբուժին կամ բուժակին, իսկ մինչև

նրանց գալը պահպանել արգանդը կեղտոտվելուց: Այս նպատակով արգանդը մաքրում են նրա վրա կպած հարդի կտորներից և աղբից, ապա լվանում են մաք- գանի-թթու կալիումի մի տոկոսանոց լուծույթով և զգուշութամբ փաթաթում են մաքուր սավանում: Փամանակ առ ժամանակ արգանդը թրջում են շքե- յերկու տոկոսանոց լուծույթով: Յավը մեղմացնելու համար անասնի թիկունքի վրա ծանրություն են դնում: Արգանդը ներս զցելուց հետո անասնին տեղավորում են մսրատեղում, հետույքը վեր բարձրացնելով, իսկ սեռական ձեղքի վրա հագցնում են հանգույց ճիշտ այնպես, ինչպես նախարգանդի դուրս ընկնելու ժա- մանակ:

#### ԾՆՆԴԱՏԵՆԴ

Այս հիվանդությունը սովորաբար զարգանում է ծննդաբերությունից մի քանի ժամ հետո, իսկ յերբեմն հաջորդ կամ յերրորդ օրը: Ծննդատենդով ամենից հաճախ հիվանդանում են պարարտ, առատ կաթ տվող կովերը: Այս հիվանդությունը նկատվում է նաև վոչ- խարների և խոզերի միջև:

Ծննդատենդի ժամանակ հիվանդ անասունը կողքի վրա յե պառկում, վիզը յերկարացնում է և գլուխը դնում կրճքի վրա: Մարմնի մակերևույթը, ականջ- ները և յեղջուրները շոշափելիս սառն են թվում: Ախորժակը փակվում է: Զգայնությունը կորչում է: Հիվանդ անասնին վորևե սուր բանով ծակելիս նա վոչ մի անհանգստություն յերևան չի բերում, Հիվանդ անասնի բերանը կիսաբաց է լինում, իսկ լեզուն դուրս ընկած:

Ծննդատենդից անասունը կարող է շուտ սատկել: Իսկ յեթե անհրաժեշտ ոգնություն ցույց տրվի, նա կարող է փրկվել:

Հիվանդ անասնին ոգնելու համար, պտուկների միջով ոգ են մղում կուրծի մեջ:

Մրա համար կուրծի պտուկների անցքի մեջ պետք է դնել կաթի սովորական փողածող (կատետը), վորը նախապես հականեխված է վազելինով կամ թարմ յու- դով քսված պետք է լինի: Փողածողի միջով ոգը հրում են ներս հատուկ նասոսով: Սակայն այդ գործիքը չլի- նելու դեպքում կարելի յե ոգտագործել հեծանիվի սովորական նասոսը կամ վորևե սրսկիչ:

Ողը ներս են հրում բոլոր չորս պտուկների մեջ մինչև այն ժամանակ, քանի դեռ պտուկները չեն լցվել ու պնդացել և գլանաձև չեն դարձել: Ոգ ներս հրելուց առաջ պետք է անասնին կթել:

Շատ անգամ հենց միայն այս բժշկութամբ անա- սուններն առողջանում են: Իսկ յեթե ոգ լցնելով նրանք չեն լավանում. այն դեպքում անհրաժեշտ է հրավիրել բժշկին կամ բուժակին:

#### ԶԱԳԸՆԿԵՐԻ ՈՒՇԱՅՈՒՄԸ

Ծննդաբերությունից հետո ծինը (այն թաղանթը, վորի մեջ զարգանում է արգանդապտուղը) սովորա- բար ինքնիրեն դուրս է գալիս: Զիերի և խոզերի մոտ ձագրնկերը դուրս է գալիս 20 — 30 րոպեյից հետո, իսկ յերջուրավոր անասունների մոտ՝ 3 — 6 ժամից հետո: Սակայն լինում են դեպքեր, յերբ խոշոր յեղ- ջուրավոր անասնի ձագրնկերն ուշանում է մի քանի օրով և ինքնիրեն չի դուրս գալիս: Այն դեպքերում, յերբ ծինը ծննդաբերությունից 12 ժամ հետո դուրս չի գալիս, հարկավոր է դիմել անասնաբուժի կամ բու- ժակի ոգնություն: Մինչև նրանց գալը, հանգույցով պետք կապել ձագրնկերի այն մասը, վորը դուրս է յեկել նախարգանդից, վորպեսզի կովը վոտքով չկոխի




նրան: Այս ժամանակ ձագընկերը և նախարգանդը հաճախ պետք է լվանալ կրեոլինի կամ լիզոլի 3 տոկոսանոց հալանեխիչ լուծույթով:

Յերբեք չի կարելի ձագընկերի ծայրին ծանրություն կապել, ինչպես այդ յերբեմն անում են: Սրանով կարելի յե առաջացնել արգանդի վտանգավոր փաստվածքներ:

#### ԱՐԳԱՆԴԻ ՀԵՏՄՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Յեթե ծննդաբերության ժամանակ սեռական որգանները կեղտոտ ձեռքերով կամ գործիքներով, կեղտոտ փուվածքով աղտոտվեն, կամ յեթե ծննդաբերության և ծինը անշատելու ժամանակ չկարողանան



Նկ. 27. Արգանդի բորբոքումով հիվանդ կով:

ինչպես պետք է ոգնություն ցույց տալ ծնող անասնին, ապա կարող է արգանդի բորբոքում առաջանալ: Այս հիվանդությունը կարող է առաջանալ նաև նորմալ կերպով ծնող անասունների մոտ, յեթե ծննդաբերությունից հետո նրանց պահեն կեղտոտ և ցուրտ շենքերում, կերակրեն փչացած կերերով և վատ խնամեն նրանց:

Սրգանդի բորբոքման դեպքում անասունը կորցնում է ախորժակը և փքվում է, կարծես թե աշխատելով ազատվել արգանդում յեղած մի ինչ վոր կողմնակի բանից: Սեռական ձեղքից արտահոսում է թաշախոտ հեղուկ, վորը յերբեմն անախորժ հոտ է ունենում: Այս հեղուկը, հիվանդության բարեհաջող ընթացքի դեպքում, թանձր է, սպիտակ գույնի, առանց հոտի: Իսկ արգանդի վատորակ բորբոքման ժամանակ հեղուկը մութ-արյան գույն և գարշելի հոտ ունի:

Անասնի մոտ արգանդի հիվանդությունը հայտնաբերելիս անմիջապես պետք է դիմել անասնաբուժի կամ բուժակի ոգնության, իսկ մինչև նրանց գալը, պետք է ձեռք առնվեն հետևյալ միջոցները. անասնին տեղավորել չոր ու մաքուր մարտեղում, հետույքը և արտաքին սեռական որգանները լվանալ հալանեխիչ լուծույթով, անասնին տալ սննդարար և դյուրամարս կեր:

#### ԻՆՉՊԵՍ ԿԱՆԻԵԼ ՀԵՏՄՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒՅՈՒՆՆԵՐԸ

Հեփծննդաբերական հիվանդությունները լուրջ և վտանգավոր են: Շատ հաճախ, ծնելուց հետո հիվանդացած անասունը սատկում է, չնայած նույնիսկ ժամանակին ցույց տրված բուժական ոգնության, իսկ յեթե առողջանա յել, ապա յերկար ժամանակ ստերջ է մնում: Ուսի հարկավոր է բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի ծննդաբերությունից հետո հիվանդություններ չառաջանան: Այս հիվանդությունները, ինչպես նաև ամեն մի հիվանդություն, ավելի հեշտ է կանխել՝ քան բժշկել:

Ամենից առաջ ծննդաբերությունը տեղի պետք է ունենա մաքուր, չոր և տաք շենքերում: Ծննդաբե-

բուժյան ժամանակ ոգնութիւնը պետք է ցույց տալ զգուշութեան բոլոր կանոնները պահպանելով, մաքուր խալաթը հագած, լվացած և հականեխված ձեռքերով: Այն բոլոր գործիքները, վորոնք ոգտագործվելու յեն ծննդաբերական ոգնութեան ժամանակ (մանկաբարձական հանգուլցները, հոգնայի գավաթները և այլն), պետք է մաքուր լվանալ և հականեխել: Լպրծուն և հականեխիչ հեղուկ պատրաստելու համար գործածվելիք ջուրը նոր յեփված և մաքուր պետք է լինի: Ոգնութիւն ցույց տալուց առաջ խնամքով և զգուշութեամբ քննում են արգանդապտղի դիրքը: Ոգնութիւնը ցույց է տրվում միայն ամենահասարակ դեպքերում: Իսկ դժվար դեպքերում պետք է իսկույն կանչել անասնաբուժին կամ բուժակին:

Հենց վոր ծննդաբերութիւնը վերջանա, անասնի հետույքը և արտաքին սեռական օրգանները պետք է լվանալ տաք հականեխիչ լուծույթով: Թաց և կեղտոտ փովածքը ծննդաբերութիւնից հետո պետք է վերցվի և փոխարինվի թարմ և չոր փովածքով: Չազրնկերը հավաքում են հատուկ դուլլի մեջ և թաղում են, իսկ դուլլը հականեխում են:

Ծննդաբերութիւնից հետո ուշադրութեամբ հսկում են անասնին: Այս ժամանակ անասնի սեռական օրգանները աստիճանաբար ազատվում են լորձուկներից և ձազրնկերի մնացորդներից, արգանդը փոքրանում և իր նախկին մեծութիւնն է ստանում: Ծննդաբերութիւնից հետո սեռական օրգաններից կատարվող արտահոսումները տևում են—կովերի մոտ մինչև 14 օր, ձիերի մոտ—մինչև 8—10 օր, խոզերի և վոչխարների մոտ—մինչև 4—8 օր:

Անասունների պահպանման և կերակրման վրա հատուկ ուշադրութիւն պետք է դարձնել: Յեթե այս

ժամանակ անասունները պահվեն այնպիսի ցուրտ և խոնավ շենքերում, վորտեղ միջանցիկ քամիները շատ են լինում, և յեթե նրանց տրվեն սառը ջուր, փչացած և անանդարար կեր, ապա հետծննդաբերական արտահոսումները յերկարատե են դառնում և արգանդի հիվանդութիւն է առաջանում, վորը շարունակվու է յերկար ժամանակ: Վերջի վերջո, այս բոլորի հետեւանքն այն է լինում, վոր հիվանդ անասունը մշտական ամուլութիւն է ունենում, հետևաբար և կորցնում է իր արժեքը:

Ծննդաբերութեան ժամանակ մաքրութիւն պահպանելը, ժամանակին յեվ զգուշութեամբ ոգնութիւն ցույց տալը, ծնելուց հետո անասուններին ուշադրութեամբ խնամելը— հետծննդաբերական հիվանդութիւնները կանխելու միակ միջոցն են հանդիսանում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Ի ն Ձ Ի Յ Պ Ե Տ Ք Ե Բ Ա Ղ Կ Ա Ն Ա Ա Ռ Ա Ն Ձ Ի Ն Ո Գ Ն Ո Ւ Յ Յ Ա Ն  
Դ Ե Ղ Ա Ր Կ Կ Ը Ծ Ն Ն Դ Ա Բ Ե Ր Ո Ւ Յ Յ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Դեղորայքի և գործիքների անունը	Քանակ
Մարդանի-թթու կալիում . . . . .	200 գրամ
Լիզոլ . . . . .	2 կիլոգրամ
Կրեոլին . . . . .	2 »
Վլի սերմ . . . . .	5 »
Տուղտարմատ (Алтейный корень) . . . . .	5 »
Մատուռակի արմատ (Лакдиан. корень) . . . . .	5 »
Մածնուկ (կոլլոդիում) . . . . .	200 գրամ
Յողի թուրմ կամ բրոմֆերրոն . . . . .	200 »
Կանաչ սապոն . . . . .	2 կիլոգրամ
Վազելին . . . . .	2 »
Նալաթ . . . . .	2 հատ
Սրբեհ . . . . .	2 »
Մանկաբարձական հանդույց . . . . .	2 »
Հոգնայի զավաթ օետինե խողովակով . . . . .	1 »
Մառլա . . . . .	10 մետր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՅՅՈՒՆ

	Եջ
Առաջաբան . . . . .	3
Անհրաժեշտ տեղեկություններ կազմախոսության մասին . . . . .	5
Արդանդապտղի զարգացումը և ծննդաբերությունը . . . . .	9
Ոգնության կազմակերպումը ծննդաբերության ժամանակ . . . . .	14
Վանոնավոր ծննդաբերություն . . . . .	15
Անկանոն ծննդաբերությունը և անասնին առաջին ոգնություն ցույց տալը . . . . .	19
Արդանդապտղի անկանոն դիրքի հասարակ դեպքերը և ոգնություն ցույց տալը . . . . .	21
Ոգնություն յերկվորյակ ծնելու ժամանակ . . . . .	35
Վիժումը և նրա առաջանալու պատճառները . . . . .	36
Արդանդապտղի տյանդակությունը . . . . .	38
Նախածննդաբերական հիվանդությունները և հիվանդ անասնին ոգնելը . . . . .	39
Հետծննդաբերական հիվանդությունները . . . . .	43
Ինչպես կանխել հետծննդաբերական հիվանդությունները . . . . .	47
Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ	
Ինչից պետք է բաղկանա առաջին ոգնության դեղաբիլը ծննդաբերության ժամանակ . . . . .	50



Отв. ред. **Г. А. Потенц** Пом. техред. **Д. М. Джинибалаян**

Издание 409/4669. Объем 1,625 печ. листа. Стат формат Б6 – 125x176.  
Уполкрайлит 00-11428. Тираж 1000 экз. Заказ 4283. Сдано в набор  
3|IX-1935 г. Подписано в печать 16|IX-1935 г.

Типография им. Стачки 1902 года г. Ростов на Дону.

«Ազգային գրադարան»



NL0267940

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.  
Цена 30 коп.

Ц 9766

8897

804

804

На армянском языке

М. Ф. ВИДИНСКИЙ

**КАК ОКАЗАТЬ ПЕРВУЮ ПОМОЩЬ  
ЖИВОТНЫМ ПРИ РОДАХ**

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**  
Ростов н-Д, Буденновский пр., № 30

**Չ Բ Ս Պ Ս Է Ե Ս Ը**  
Ռուսապ-Դոն, Մազկովսկայա, № 30  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)